# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊՏՂԱԲԱՆՋԱՐ ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ

ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ, ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ, ԿԱՐՏՈՖԻԼԻ ՅԵՎ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ

338.14
Կ-21

ՅԵՐԵՎԱՆ

17 MAY 2013
30380

Թարգմ. Լ. ՕՀԱՆՅԱՆ Խմբ. Հ. ՄԱՐՋԱՆՅԱՆ

Գլավլիտ 7130 (բ) Պատվեր 123 Տիրաժ 300
Պետհրատի տպարան, Երևան

338.14
Կ-21
17 FEB 2010
1007
33986

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊՏՂԲԱՆՋԱՐ ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ, ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ, ԿԱՐՏՈՖԻԼԻ ԵՎ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ Պ. Բ. Ա. Ֆ.—ՄԱՍԻՆ

### 1. Ընդհանուր դրույթյուններ

*1. Ապրանքային ֆերման կազմելով կոլեկտիվ տնտեսության մի մասը, հանդիսանում է կոլխոզի ընդհանուր տնտեսությունը և նրա աշխատանքների հաջողությունն առաջին հերթին կախված է հենց իրենց, կոլխոզնիկների աշխատանքից: Ֆերման կազմակերպվում և գործում է կոլխոզի և Պտղաբանջար Կոլխոզկենտրոնի (նրա բաժանմունքի միջոցով) միջև կնքված պայմանագրի հիման վրա:*

*2. Ֆերմայի տնտեսության հիմքը կազմում են՝*

*ա) Կոլխոզի կողմից առանձնացրված պտղատու այգիների, բանջարանոցների, կարտոֆիլի և խաղողի այգիների տարածությունը:*

*բ) Հատուկ գյուղատնտեսական ինվենտարը և անհրաժեշտ սերմերի պաշարը:*

*գ) Ֆերմային հատկացված արտադրական վարկերը: Կոլխոզն ապահովում է ֆերման համապատասխան տնտեսական և արտադրական շինություններով ու կահավորումով, ինչպես նաև բանվորական ու քարշող ուժով: Կոլխոզը պատասխանատու յե, ֆերմայի տնտեսության կազմակերպման և ֆերմայի կողմից կնքված պայմանագրերի կիրառման համար: Ֆերմայի կազմակերպման համար, կոլխոզի կողմից կատարված*

բոլոր ներդրումները հաշվի չեն առնվում որպես կոլխոզային ֆերմայի հատուկ միջոցներ:

3. Կոլխոզային ֆերման յուր տնտեսությունը վարում է, կոլխոզի և Պտղաբանջար Կոլխոզկենտրոնի կողմից հաստատված արտադրական ծրագրով, ստանում է արտադրական վարկեր կոլխոզի վարչության միջոցով. մատակարարվում է արտադրության հատուկ միջոցներով և կատարում է յուր արտադրանքի իրացումը Պտղաբանջարկոլխոզկենտրոնի տեղական բաժանմունքի միջոցով: Կոլխոզը պատասխանատու չէ ֆերմային բաց թողնված վարկերի ճիշտ օգտագործման համար և իրավազոր է օգտագործել նրանց այն նպատակների համար, որին նրանք հատկացված են:

4. Կոլխոզային ֆերմայի ամբողջ եկամուտը, բացի 3% պարգևատրման ֆոնդից մտնում է կոլխոզի ընդհանուր եկամուտների մեջ. Ֆերմայի բոլոր ծախսերը բերքի բաշխման ժամանակ, հաշվի չեն առնվում կոլխոզի ընդհանուր ծախսերի մեջ ֆերմայի առանձին հաշվով: Անբաժանելի ֆոնդի (դրամով) առանձնացման ժամանակ կոլխոզը պարտավոր է որոշ գումար պահել ապրանքային ֆերմայի լայնացման համար: Կոլխոզնիկների կողմից ֆերմայում կատարված աշխօրերը մտցվում են աշխօրերի ընդհանուր թվի մեջ, որով բաշխվում է կոլխոզի եկամուտները և վարձատրվում է ընդհանուր կարգով: Ֆերմայում աշխատող կոլխոզնիկները բավարարվում են ի հաշիվ կոլխոզի ֆոնդերի (կուլտուրական, կադրերի պատրաստման և այլն) ընդհանուր կարգով:

5. Կոլխոզային ֆերմայի ղեկավարումը հանձնարարվում է ֆերմայի վարիչին, որին նշանակում է կոլխոզի վարչությունը և հաստատում է Պտղաբանջար Կոլխոզկենտրոնի լիազորը: Ֆերմայի վարիչի փոփոխումը կարող է կատարվել կոլխոզի վարչության որոշմամբ և լիազորի գիտությամբ: Վարիչն իր գործունեության մեջ առաջնորդվում է կանոնադրություններով:



6. Ֆերմայի բոլոր աշխատանքները, ինչպես նաև շինարարությունը, կատարվում է կոլխոզնիկների ուժերով: Որպես վարձու ուժ կոլխոզը կարող է հրավիրել միմիայն մասնագետներին: Շինարարությունը կատարվում է տնտեսական հաշվարկով, շինարարական կազմակերպությունների տեխնիքական հսկողությամբ:

7. Կոլխոզի վարչությունը ֆերմայի վարիչի հետ միասին կազմում է այն կոլխոզնիկների ցուցակը, որք պիտի աշխատեն ֆերմայում: Ֆերմայում աշխատելու համար առանձնացված կոլխոզնիկները բաժանվում են բրիգադների, յուրաքանչյուր բրիգադայում նշանակվում է բրիգադավար: Բրիգադաներում կոլխոզնիկների կազմը հիմնական աշխատանքներում պետք է լինի մշտական, ամբողջ տարվա ընթացքում: Մասսայական և կամպանիոն աշխատանքների ժամանակ կոլխոզը պարտավոր է հատկացնել հավելյալ բրիգադաներ աշխատանքն իր ժամանակին ավարտելու համար: Բոլոր բրիգադաները, թե մշտական և թե ժամանակավոր, իրենց հատկացված ինվենտարով և քաշող ուժով կցվում են հատուկ հողամասերի:

8. Ֆերմայում աշխատող կոլխոզնիկների աշխատանքի հաշվառումը կատարվում է ամենօրյա գրանցումների միջոցով և գրանցվում է կոլխոզնիկների աշխ-գրքույկի մեջ, ոչ պակաս 5-օրյակում մեկ անգամ: Հաշվառման ձևերը և կարգը մշակվում են ֆերմայի վարիչի և կոլխոզ վարչության կողմից:

9. Ֆերմայի վարիչն առանձին աշխատանքների տեսակների համար կազմում է հրահանգներ և կանոններ՝ ճիշտ որոշելով յուրաքանչյուր կոլխոզնիկի պարտականությունները: Այդ հրահանգները և կանոնները անպայման քննվում են արտադրական խորհրդակցություններում և հաստատվում են կոլխոզի վարչության կողմից:

10. Կոլխոզնիկների աշխատանքն անպայման կազմակերպվում է գործավարձի հիմունքներով, որի հա-

մար սահմանվում են արտադրանքի նորմաներ, վորը հաստատվում է արտադրական խորհրդակցություններում կոլխոզի վարչության և ընդհանուր ժողովի կողմից:

11. Աշխատանքի քանակական և վորակական ցուցանիշների գերակատարելու համար, ըստ կոլխոզի վարչության կողմից ընդունված կանոնների, կոլխոզնիկները պարգևատրվում են ի հաշիվ պրեմիալ ֆոնդի: Արտադրանքի նորմաների թերակատարման, աշխատանքի վորակի վատացման, աշխ-դիսցիպլինայի խախտման, լոդրության և անփույթ ու անտարբեր վերաբերմունքի համար դեպի իր պարտականությունները և ինվենտարը, ֆերմայի վարիչը դնում է տույժեր, վորոնք նախատեսված են կոլխոզի ներքին կանոններով: Բացառիկ խոշոր հանցանքներ գործելու դեպքում կոլխոզի վարչության առաջ հարց է հարուցվում մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար:

12. Ֆերմայի աշխատանքների ամենալայն ծավալումը պետք է ստանա աշխատանքի սոցիալիստական մեթոդները (սոցմրցում, հարվածայնություն). սոցմրցումն անց է կացնում թե առանձին կոլխոզնիկների և թե բրիգադաների ու այլ ֆերմաների միջև:

13. Կոլխոզը պարտավոր է ամբողջ գույքը և ֆերմայի ցանքսն ապահովագրել բնական աղետներից:

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՅԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պտղաբանջար ապրանքային ֆերմայի վարիչի վրա պարտականություն է դրվում ֆերման կազմակերպելու և վարելու ֆերմայի ֆինանսական արտադրական պլանը կիրառելու համար:

2. Ֆերմայի վարիչը կոլխոզի վարչության առաջ պատասխանատու յե տնտեսության դրության և ֆերմայի գույքի պահպանման համար:



3. Ֆերմայի վարիչը պատասխանատու յե, արտադրության տեխնիքական բարելավման ու բարձրացման բոլոր ձեռնարկումների համար, ապրանքայնության բարձրացման ի հաշիվ բերքատվության բարձրացման և արտադրանքի վորակի լավացման, կորուստների դեմ պայքարելու, ֆերմայի ծախսումների նվազեցման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար:

4. Ֆերմայի վարիչին յենթարկվում են, թե ֆերմային կցված կոլխոզնիկները և թե կոլխոզի կողմից ժամանակավորապես առանձնացված աշխատողներն ու վարձու մասնագետները:

5. Իր պարտականությունների խախտման, անգործունեության, անտնտեսավարության և իր դիրքն ի չարը գործադրելու համար, ֆերմայի վարիչը պատասխանատու յե քրեական կարգով, իսկ բացի դրանից պարտավորվում է կրելու այն նյութական վնասները, վոր հասել է կոլխոզին նրա հանցանքով: Ֆերմայի վարիչի պարտականություններն ըստ տնտեսության առանձին ճյուղերի և աշխատանքների վորոշվում են.

## Ա. ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ֆերմայի վարիչի վրա պարտականություն է դրվում բոլոր պահանջվելիք ագրո-ձեռնարկումների կիրառումը, վորպիսին ընդունված է շրջանի կողմից տվյալ ֆերմայի նկատմամբ:.

ա) Կազմակերպել ժամանակին վարը, նախացանքային մշակումը, ցանքսը և բերքահավաքը.

բ) Գոմաղբի և հանքային պարարտանյութերի գործադրումը, ինչպես նաև նշանակված նորմաներով կրիացումը (կիր շաղ տալը).

գ) Բոլոր աշխատանքների կիրառումը ագրոմինիմումով հաստատված ժամկետին.

դ) Ոգտագործել ցանքսի համար լավորակ և տես-

սորտավոր սերմեր, վորպիսին նախատեսնվում է տվյալ շրջանի համար:

յե) Բույսերի պահպանումը վնասատուներից և հիվանդություններից՝ ապահովելով իր ժամանակին աշխատանքների կիրառումը:

զ) Սերմերի և տնկիների պահպանումը պատշաճ պայմաններում.

է) Բանջարանոցային և պտղատու կուլտուրաների մեքենայացման բոլոր նվաճումների ոգտագործումը:

2. Ֆերմայի վարիչը պարտավոր է պահպանել կենդանի կապ հարևան մասնագիտական խորհտնտեսությունների և փորձակայանների հետ, նրանց փորձը իրենց տնտեսության մեջ կիրառելու համար: Ֆերմայի վարիչը փորձակայանի ղեկավարությամբ և համաձայնությամբ ֆերմայում կազմակերպում է փոքրիկ փորձնական հողամաս:

3. Ֆերմայի վարիչը պարտավոր է կիրառելու ագրո-մասնագետների ցուցմունքներն ագրո-տեխնիկայի գործադրման խնդրում:

## Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ֆերմայի վարիչը կրում է անձնական պատասխանատվություն կոլխոզի կողմից ընդունված, աշխատանքի կազմակերպման կանոնների կիրառման համար:

2. Ֆերմայի վարիչին իրավունք է վերապահվում առաջադրելու թեկնածուներ ի հաստատումն կոլխոզի վարչության, ֆերմայում աշխատելու համար և հեռացնել աշխատանքից այն կոլխոզնիկներին, վորոնք անփույթ կլինեն իրենց պարտականությունների կատարման համար: Արտադրանքի նորմաները չկատարողներին և լոդրներին ուղարկելով նրանց կոլխոզի վարչության տրամադրության տակ:

3. Ֆերմայի վարիչը ֆերմայում աշխատող թե մշտական և թե ժամանակավոր բոլոր կոլխոզնիկներին բաժանում է բրիգադների, նշանակում է բրիգադավարներ և բրիգադաներին կցում է վորոշ հողամասեր աշխատանքներին ամբողջ սեզոնի համար:



4. Վարիչը կոլխոզնիկների աշխատանքները կազմակերպում է այնպես, վորպեսզի նրանք մասնագիտանան աշխատանքների վորոշ ճյուղերում, դրանով իսկ ապահովելով աշխատանքի և արտադրանքի վորակի բարելավումը և աշխատանքի արտադրողականությունը:

5. Վարիչը կոլխոզնիկների աշխատանքը կազմակերպում է գործավարձի հիմունքներով ըստ յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքի վորակի և քանակի, աջակցելով կոլխոզնիկներին բոլոր աշխատանքներում սոցմրցումը և հարվածայնությունը գործադրելու ու զարգացնելու:

6. Արտադրանքի նորմաների թերակատարման, աշխատանքի վորակի ցածրացման, աշխ-դիսցիպլինայի խախտման, լոդրության, անփույթ ու անտարբեր վերաբերմունքի համար դեպի իր պարտականությունները և ինվենտարը ֆերմայի վարիչը դնում է տույժեր, վորոնք նախատեսնված են կոլխոզի ներքին կանոններով, մինչև իսկ աշխատանքից հեռացնելը:

7. Վարիչը մշակում է կանոններ, վորոնք ճշտորեն նախատեսնում են ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կոլխոզնիկի պարտականությունները:

8. Ֆերմայի վարիչը կազմակերպում է կոլխոզնիկների աշխատանքի հաշվառումը, համաձայն կոլխոզում ընդունված կանոնների:

## Գ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ֆերմայի վարիչը՝

ա) Ղեկավարում է շինարարությունը և ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցները շինարարությունն իր ժամանակին ավարտելու համար:

բ) Վարչության միջոցով ձեռք է առնում միջոցներ ապահովելու տեղական շինանյութերի մթերումն իր ժամանակին և դրանց տեղափոխում է շինարարության վայրն այն ժամկետներին, վորը հաստատված է արտադրական պլանով և շինարարական բանվորական ծրագրերով:

## Դ. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՑՄԱՆ ՅԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

Ֆերմայի վարիչը պարտավորվում է՝

ա) Ձեռք առնել բոլոր միջոցներն ապահովելու արտադրական պլանով նախատեսնված ցանքերի տարածությունը, ստանալու ամենաբարձր բերքը և ապահովելու այդպիսին փչացումներից և կորուստներից:

բ) Ապահովել բանջարեղենի և պտուղների վերամշակումն ու պահպանումը՝ վոչ պակաս այն չափերից, վոր նախատեսնված է արտադրական ծրագրով:

գ) Ֆերման ապահովում է տարայի պահանջով, հսկում է և պատասխանատու յե արտադրանքի պատշաճ պահպանման և վերամշակող կահավորման ու շինությունների սանիտարական դրության համար:

դ) Կազմակերպում է ամբողջ ապրանքային արտադրանքի հանձնումը պետական և կոոպերատիվ կազմակերպություններին, համաձայն կոլխոզի և Պտղաբանջար Կոլխոզկենտրոնի միջև կնքած պայմանագրի:

## Յե. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

ա) Ֆերմայի վարիչը պատասխանատու յե իր ժամանակին կազմելու և ներկայացնելու պակասորդ սերմերի և տնկիների, գյուղգործիքների քիմիկատների և վնասատուների դեմ պայքարելու միջոցների հանքային պարարտանյութերի և արտադրության այլ միջոցների հայտերը, ապահովում է դրանց իր ժամանակին ստացումը մատակարարող կազմակերպություններից:

բ) Տեղում ապահովում է պակասող և կենտրոնացման կարգով մատակարարման մեջ չնախատեսնված սերմերի քանակը, տնկիները, այլ նյութերը և արտադրության միջոցները:

## Զ. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.

Ֆերմայի վարիչը պարտավոր է՝

ա) Կոլխոզակտիվի և մասնագետների հետ կազմել ֆերմայի արտադրական-ֆինանսական պլանը և բանվո-



րական ծրագրերը, անց է կացնում այդպիսին արտադրական խորհրդակցություններում, կոլխոզի վարչության և ընդհանուր ժողովներում ու ներկայացնում է Պտղաբանջար Կոլխոզկենտրոնին ի հաստատություն:

բ) Կազմում է ֆերմայի շինարարության, կահավորման, վերակահավորման ու մեքենայացման պլանը և ներկայացնում է կոլխոզի վարչության և Պտղաբանջարկոլխոզկենտրոնի Հայաստանի Լիազորությանն ի հաստատություն:

## Է. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

) Վարիչը ֆերմայում կազմակերպում է հաշվետվությունը և նրա ճիշտ դրվածքի համար, ըստ Պտղաբանջար Կոլխոզկենտրոնի կողմից հաստատված ձևերի, պատասխանատու յե:

բ) Վոչ պակաս ամիսը մեկ անգամ հաշիվ տալ կոլխոզվարչության և ընդհանուր ժողովում, ֆերմայի դրության և արտադրական պլանի կատարման մասին:

գ) Պարտավոր է ներկայացնել Պտղաբանջարկոլխոզկենտրոնին ձևերով հաստատված ժամկետին, կոլխոզի վարչության և Պտղաբանջարակոլխոզկենտրոնի բաժանմունքներին բոլոր տեղեկությունները և հաշվետվությունը:

## Ը. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ:

ա) Վարիչը պարտավոր է ամենալայն աջակցություն ցույց տալ արտադրական խորհրդակցության աշխատանքներն ուժեղացնելու իր անձնական մասնակցությամբ:

բ) Շարքային կոլխոզնիկների սիստեմատիկ առաջքաշումը.

գ) Կոլխոզնիկների կողմից առանձնացնել լավագույն փորձված հարվածայիններին և ներկայացնել վարչությանը, նրանց պարգևատրելու և ուղարկելու ագրո-տեխնիկայի ուսման հատուկ դասընթացներ, տեխնիկումներ և ԲՈՒՀ-եր:

դ) Նպաստել ագրո–տեխնիկայի խմբակների, գըրույցների, դասախոսությունների կազմակերպման:

յե) Կազմակերպել պտղաբուծության, բանջարաբուծության, խաղողագործության և խաղողի մշակության անկյուններ, ցուցահանդեսներ և այլ ցուցադրական ձեռնարկումներ:

զ) Կազմակերպել ֆերմայի մատակարարումն այգեգործության, բանջարաբուծության և այլ գրականության (բրոշյուրներ, պլակատներ, ժուռնալներ) ու հետևել նրա կանոնավոր օգտագործմանը:

է) Պարզաբանել թե կոլխոզնիկներին և թե մենատնտեսներին բանջարաբուծական խոշոր տնտեսության առավելությունները և նվաճումները: Կապ հաստատել տեղի կուսակցական, կոմյերիտական և հասարակական կազմակերպությունների հետ:

## Թ. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Վարիչը պարտավոր է՝

ա) Անպայման ապահովագրել ամբողջ գույքը, կենդանի և մեռյալ ինվենտարը և ֆերմայի բերքը տարերային աղետներից (կարկուտ, սառնամանիքներ, յերաշտ և այլն):

բ) Կառուցել հակահրդեհային կահավորում (տակառներ, բոցամարիչներ և շվաբրներ) և անցկացնել հակահրդեհային ձեռնարկումներ:

գ) Հաստատել մոտակա հրդեհաշեջ խմբի հետ ամենասերտ կապ.

դ) Կազմակերպել պահպանումն և ապահովումն ամբողջ գույքի և ցանքերի թե կողոպուտներից և թե անխնամ վերաբերմունքից:



## Ժ. ՇՐՋԿՈԼԽՈԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՏՂԱԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

1. Հսկել և հետևել, վոր ապրանքային ֆերման լինի իրականում ապրանքային, վորի համար Շրջկոլխոզմիությունը կրում է իր վրա պատասխանատվություն, վորպեսզի ֆերման ժամանակին և լրիվ, համաձայն պայմանագրի հանձնե իր ապրանքային պրոդուկցիան:
2. Նշել շինարարության համար ֆերմաներում համապատասխան կետեր, և օգնել կոլխոզին նախապատրաստվելու տվյալ շինարարությանը:
3. Անդրպտղաբանջար Կոլխոզկենտրոնի ներկայացուցիչների հետ միասին անցկացնելու պայմանագրային կամպանիան:
4. Ամեն կերպ օժանդակել, վոր ֆերման կարողանա ժամանակին ձեռք բերել իրեն համար անհրաժեշտ մեքենաները, շինանյութերը և այլ միջոցներ:
5. Որինակելի հիմունքներով կազմակերպելու ֆերմայում աշխատանքը, գործավարձը. հետևելու, վոր ֆերման Անդրպտղաբանջար Կոլխոզկենտրոնի կողմից նախատեսնված միջին արտադրանքի նորման կատարի:
6. Պատասխանատու յե և պետք է հետևի, վոր նշված նպատակին օգտագործվի ֆերմայի կողմից ստացված բոլոր նպատակային վարկերը, ինչպես և շինանյութերը:

7. Շրջկոլխոզմիությունների վրա ընկնում է մշտական պարտականություն ֆերմաների կողմից Անդրպտղաբանջարկոլխոզկենտրոնի հետ կնքած պայմանագրային պարտավորությունները, ժամանակին և լրիվ կատարելու համար: Շրջկոլխոզմիությունը պարտավորվում է՝

ա) Սիստեմատիկաբար ստուգելու կոլխոզի և Անդրպտղաբանջար Կոլխոզկենտրոնի կողմից կնքված պայմանագրերի կատարման ընթացքը.

բ) Ստուգել աշխատանքի դրվածքը ֆերմաներում.

գ) Աշխատանքի կազմակերպման դրվածքը և գործավարձի կիրառման ընթացքը, ինչպես և նվիրատվությունների կարգն ու բաշխումը:

դ) Ֆերմայի ընդհանուր յեկամուտների, կատարված ծախսերի և աշխատանքի հաշվառման կանոնավոր դրվածքի ստուգումը:

յե) Ոժանդակելու կոլխոզներին (ֆերմաներին) տեղական միջոցներից ձեռք բերելու շինանյութեր:

8. Ֆերմայի աշխատանքների ստուգումն ու հսկումը, կատարվում է հրահանգչական ուսումնասիրական հիմունքներով, հենց իրենց կոլխոզների միջոցով. ստուգման արդյունքների մասին պարտավոր է անմիջապես տեղեկացնել Անդրպտղաբանջարկոլխոզկենտրոնի Հանրապետական Լիազորությանը (կոլխոզկենտրոնին կից):

9. Շրջկոլխոզմիությունները տալիս են իրենց կարծիքը ֆերմայի վարիչ ընտրելու թեկնածուների մասին Անդրպտուղբանջար Կոլխոզկենտրոնի Հանրապետական լիազորին:

## Ժ. ԱՅԳԵ-ՊՏՂԱ-ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՍՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՆԴԵՊ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ

1. Այգեպտղաբանջարաբուծական ֆերմաներ կազմակերպելու ու նրանց կանոնավոր սպասարկելու համար Անդրպտղաբանջարկոլխոզկենտրոնը կազմակերպում է տեսչական ապարատ (շրջաններում):

2. Շրջանային տեսուչն իր աշխատանքները տանում է Շրջկոլխոզմիությունների հետ կոնտակտ ձևով և մտնում է Կոլխոզմիության Վարչության կազմի մեջ, վորպես անդամ:

3. Տեսչի համար կենտրոնական վայր հանդիսանում է տվյալ շրջանի կենտրոնը:

4. Անդրպտղաբանջարաբուծ. Կոլխոզկենտրոնի տեսուչը կատարում է հետևյալ պարտականությունները՝

ա) Պատասխանատու յե ֆերմաներում արտադրությունը կազմակերպելու և հսկելու, վորպեսզի ապրանքային ֆերմաները ամբողջ ապրանքային յելույթը հանձնեն իր ժամանակին:



բ) Շրջկոլխոզմիությունների հետ միասին կազմել տվյալ շրջանի կոլխոզ-ֆերմաների արտադրական ծրագրները, ստուգել և հսկել պլանի լրիվ կատարմանը և իր դիտողությունները, յեզրակացությունները ժամանակին հայտնելու Անդրպտղաբանջարաբուծ. Կոլխոզկենտրոնի Հայաստանի լիազորին:

գ) Ցույց տալ ամենօրյա օգնություն կոլխոզ-ֆերմաներին արտադրության ու աշխատանքի կազմակերպման գործում (լրիվ կիրառելով գործավարձային ձևը, աշխատանքի հաշվառումը և այլն):

դ) Ոժանդակել կոլխոզֆերմաներին ժամանակին ձեռք բերելու շինանյութեր, տեսակավոր սերմեր և արտադրության միջոցներ:

յե) Ուշի-ուշով հետևել, վորպեսզի կոլխոզները հանձնեն ապրանքային պրոդուկցիան:

զ) Շրջկոլխոզմիության հետ միասին վաղօրոք վորոշվում է, ֆերման վերամշակման յենթարկող ձեռնարկության կցման խնդիրը, ապահովվում է փոխադրական միջոցների կազմակերպումը, հսկել, վորպեսզի ապրանքը հանձնվի վերամշակող ձեռնարկին՝ գործարանին:

Հետևել, վորպեսզի ապրանքի ռեալիզացիայի խնդրում տեղի չունենան վոչ մի ձեղքվածք. այդ բոլոր խնդիրները վաղօրոք համաձայնեցնելով Հայաստանի Լիազորության հետ:

է) Այն դեպքում, յերբ կոլխոզը հրաժարվում է իր պարտականությունները կատարելուց, և չի հանձնում ապրանքային պրոդուկցիան, տեսուչը կոլխոզմիության հետ միասին դիմում են ներազդեցական միջոցների՝ այն է հարց են բարձրացնում Պետբանկին դադարեցնել վարկավորումը, կամ ժամանակ[illegible] դանձել վարկերը. դադարեցվում է շին[illegible] թերի մատակարարումը, հարց է բարձ[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0205921

30.580

պտղաբանջարաբույծ. Կոլխոզկենտրոնի առաջ տվյալ կոլխոզի հետ պայմանագրի վոչնչացման մասին:

ը) Տեսուչը պետք է այնպես դասավորի աշխատանքները, վոր շրջկոլխոզմիությունը մասնակից դառնա իր գործունեյությանը. Նա կարող է փակել կոլխոզի վարկավորումը, համաձայնության գալով կոլխոզմիության հետ:

թ) Կազմակերպում է փորձի փոխանակման գործը, լավագույն ֆերմաների աշխատանքների որինակելիությունը ուրիշ ավելի թույլ ֆերմաներ փոխադրելու, պարբերաբար լուսաբանել մամուլում այդ ուղղությամբ հաջողությունները, խոչընդոտները, ամեն կերպ աշխատելով բարձրացնել ու որինակելի դարձնել ֆերմաները, շրջկոլխոզմիության հետ կազմակերպել ցուցահանդեսներ, եքսկուրսիաներ և այլն: